Կադաստրի կոմիտե

Անշարժ գույքի շուկայի վերլուծություն

2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍ

Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտե
www.cadastre.am

Բովանդակություն

1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ 2

1.1 Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրականացված ընդհանուր գործարքների վերլուծություն 2

1.2 Երևան քաղաքի անշարժ գույքի շուկայում իրականացված ընդհանուր գործարքների վերլուծություն 8

1.3 Մարզերում անշարժ գույքի շուկայում իրականացված ընդհանուր գործարքների վերլուծություն 11

2 ՕՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ 14

2.1 Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրականացված օտարման գործարքների վերլուծություն 14

3 ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ 19

3.1 Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն 19

3.2 Երևան քաղաքում անշարժ գույքի շուկայում իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն 23

3.3 Մարզերում անշարժ գույքի շուկայում իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն 25

3.4 Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրավաբանական անձանց կողմից իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն 26

3.5 Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում օտարերկրյա քաղաքացիների կողմից իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն 29

3.6 Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների վերլուծություն 34

3.7 Հողերի առուվաճառքի գործարքների վերլուծություն 38

4 ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ 44

4.1 Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրականացված վարձակալության գործարքների վերլուծություն 44

4.2 Երևան քաղաքում անշարժ գույքի շուկայում իրականացված վարձակալության գործարքների վերլուծություն 48

4.3 Մարզերում անշարժ գույքի շուկայում իրականացված վարձակալության գործարքների վերլուծություն 51

5 ԳՐԱՎԱԴՐՄԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ 53

5.1 Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրականացված գրավադրման գործարքների վերլուծություն 53

5.2 Երևան քաղաքում անշարժ գույքի շուկայում իրականացված գրավադրման գործարքների վերլուծություն 57

5.3 Մարզերում անշարժ գույքի շուկայում իրականացված գրավադրման գործարքների վերլուծություն 59

Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2019 թվականի մայիսին

(վերլուծություն)

Անշարժ գույքի շուկայի վերլուծությունը կատարվել է՝ հիմք ընդունելով 2019 թվականի մայիս ամսվա ընթացքում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների վերաբերյալ տվյալները և անշարժ գույքի առաջարկի շուկայից հավաքագրված տեղեկությունները:


1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

1.1 Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրականացված ընդհանուր գործարքների վերլուծություն

1.1.1 2019 թվականի մայիսին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 15956 իրավունքի պետական գրանցման գործարք:

2009-2019 թվականների մայիս ամսվա անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակները ներկայացված են Գծապատկեր 1.1-1-ում.


Գծապատկեր 1.1-1




1.1.2 Հանրապետությունում 2019 թվականի մայիսին անշարժ գույքի նկատմամբ գրանցված գործարքների առավել բարձր տոկոսաչափը գրանցվել է Երևան քաղաքում՝ 34.1 %, իսկ առավել ցածրը՝ Վայոց ձորի մարզում՝ 2.2%:

Գծապատկեր 1.1-2-ում և Գծապատկեր 1.1-3-ում ներկայացված է 2019 թվականի մայիսին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունը ըստ Երևան քաղաքի և մարզերի.

Գծապատկեր 1.1-2



Գծապատկեր 1.1-3



Աղյուսակ 1.1-1-ում ներկայացված է 2019 թվականի մայիսին հանրապետությունում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2018 թվականի մայիս և 2019 թվականի ապրիլ ամիսների նկատմամբ.

Աղյուսակ 1.1-1


	2018 թվականի մայիս	փոփոխումը	2019 թվականի մայիս	փոփոխումը	2019 թվականի ապրիլ
Երևան	4594	18.4%	5437	-4.7%	5705
Արագածոտն	832	11.2%	925	15.5%	801
Արարատ	1114	32.6%	1477	-12.0%	1678
Արմավիր	1044	24.5%	1300	-0.1%	1301
Գեղարքունիք	1070	-4.7%	1020	-18.6%	1253
Լոռի	1087	0.6%	1093	1.5%	1077
Կոտայք	1849	13.6%	2101	6.1%	1980
Շիրակ	498	32.5%	660	-7.7%	715
Սյունիք	603	26.4%	762	-10.2%	849
Վայոց ձոր	329	5.2%	346	22.3%	283
Տավուշ	520	60.6%	835	33.0%	628
Հանրապետություն	13540	17.8%	15956	-1.9%	16270

2019 թվականի մայիսին հանրապետությունում գրանցված գործարքների քանակը 2019 թվականի ապրիլի համեմատ նվազել է 1.9 %-ով, իսկ 2018 թվականի մայիսի համեմատ՝ աճել 17.8 %-ով: Երևան քաղաքում 2019 թվականի մայիսին գրանցված գործարքների քանակը 2019 թվականի ապրիլի համեմատ նվազել է 4.7 %-ով, իսկ 2018 թվականի մայիսի համեմատ՝ աճել 18.4 %-ով: Մարզերի քաղաքային բնակավայրերում 2019 թվականի մայիսին գրանցված գործարքների քանակը 2019 թվականի ապրիլի համեմատ նվազել է 0.9 %-ով, 2018 թվականի մայիսի համեմատ՝ աճել 20.3 %-ով, իսկ գյուղական բնակավայրերում 2019 թվականի մայիսին գրանցված գործարքների քանակը 2019 թվականի ապրիլի համեմատ նվազել է 0.1 %-ով, 2018 թվականի մայիսի համեմատ՝ աճել 15.8 %-ով:


1.1.3 Հանրապետությունում 2019 թվականի մայիսին ընդհանուր գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 35.8 %, գրանցվել է օտարման, իսկ առավել ցածրը՝ 1.1 %՝ օրինականացման գործարքների նկատմամբ:

Գծապատկեր 1.1-4-ում և Գծապատկեր 1.1-5-ում ներկայացված է 2019 թվականի մայիսին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունը ըստ տեսակների.

Գծապատկեր 1.1-4



Գծապատկեր 1.1-5



Աղյուսակ 1.1-2-ում ներկայացված է 2019 թվականի մայիսին հանրապետությունում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2018 թվականի մայիս և 2019 թվականի ապրիլ ամիսների նկատմամբ.

Աղյուսակ 1.1-2

Հ/Հ	Գործարքի տեսակ	2018 թվականի մայիս	փոփոխումը	2019 թվականի մայիս	փոփոխումը	2019 թվականի ապրիլ
1	**Օտարում**	5106	11.8%	5708	-5.2%	6020
1ա	Առուվաճառք	3677	11.5%	4100	-4.9%	4310
1բ	Նվիրատվություն	1118	16.1%	1298	-9.2%	1429
1գ	Փոխանակում	11	27.3%	14	27.3%	11
1դ	Օտարման այլ տեսակ	300	-1.3%	296	9.6%	270
2	**Վարձակալություն**	827	32.3%	1094	-9.4%	1207
3	**Գրավադրում**	2244	31.1%	2941	1.2%	2905
4	**Ժառանգություն**	2171	15.1%	2498	4.5%	2390
5	**Օրինականացում**	131	35.1%	177	-3.3%	183
6	**Առաջնային գրանցում**	2106	17.9%	2483	3.5%	2399
7	**Պետգր. /վերագրանցում/**	955	10.5%	1055	-9.5%	1166
	Ընդամենը /գործարք/	13540	17.8%	15956	-1.9%	16270

Աղյուսակ 1.1-3-ում ներկայացված է հանրապետությունում 2019 թվականի մայիսին անշարժ գույքի նկատմամբ գրանցված գործարքների քանակական և տոկոսային բաշխվածությունը ըստ գործարքի տեսակների.


Աղյուսակ 1.1-3

Գործարքի տեսակ		Հանրապետություն		Երևան			Մարզերի քաղաքային բնակավայրեր			Գյուղական բնակավայրեր		
		քանակ	%	քանակ	%	տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում	Քանակ	%	տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում
1	**Օտարում**	5708	35.8%	1913	35.2%	33.5%	1536	36.1%	26.9%	2259	36.1%	39.6%
1ա	Առուվաճառք	4100	25.7%	1438	26.4%	35.1%	1085	25.5%	26.5%	1577	25.2%	38.5%
1բ	Նվիրատվություն	1298	8.1%	435	8.0%	33.5%	351	8.2%	27.0%	512	8.2%	39.4%
1գ	Փոխանակում	14	0.1%	2	0.0%	14.3%	4	0.1%	28.6%	8	0.1%	57.1%
1դ	Օտարման այլ տեսակ	296	1.9%	38	0.7%	12.8%	96	2.3%	32.4%	162	2.6%	54.7%
2	**Վարձակալություն**	1094	6.9%	667	12.3%	61.0%	243	5.7%	22.2%	184	2.9%	16.8%
3	**Գրավադրում**	2941	18.4%	1524	28.0%	51.8%	845	19.9%	28.7%	572	9.1%	19.4%
4	**Ժառանգություն**	2498	15.7%	503	9.3%	20.1%	525	12.3%	21.0%	1470	23.5%	58.8%
5	**Օրինականացում**	177	1.1%	55	1.0%	31.1%	55	1.3%	31.1%	67	1.1%	37.9%
6	**Առաջնային գրանցում**	2483	15.6%	542	10.0%	21.8%	782	18.4%	31.5%	1159	18.5%	46.7%
7	**Պետգր. /վերագրանցում/**	1055	6.6%	233	4.3%	22.1%	269	6.3%	25.5%	553	8.8%	52.4%
	Ընդամենը /գործարք/	15956	100.0%	5437	100.0%	34.1%	4255	100.0%	26.7%	6264	100.0%	39.3%


1.1.4 Հանրապետությունում 2019 թվականի մայիսին ընդհանուր գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 37.3 %, գրանցվել է հողերի, իսկ առավել ցածրը՝ 2.4 %՝ արտադրական նշանակության շինությունների նկատմամբ:

Գծապատկեր 1.1-6-ում և Գծապատկեր 1.1-7-ում ներկայացված են 2019 թվականի մայիսին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունը ըստ գույքի տեսակների.

Գծապատկեր 1.1-6



Գծապատկեր 1.1-7



Աղյուսակ 1.1-4-ում ներկայացված է 2019 թվականի մայիսին հանրապետությունում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2018 թվականի մայիս և 2019 թվականի ապրիլ ամիսների նկատմամբ.

Աղյուսակ 1.1-4

Հ/Հ	Գույքի տեսակ	Հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակները				
		2018 թվականի մայիս	փոփոխումը	2019 թվականի մայիս	փոփոխումը	2019 թվականի ապրիլ
1	Բնակարան	3921	12.4%	4407	-10.2%	4910
2	Անհատական բնակելի տուն	2743	23.0%	3373	-4.4%	3528
3	Արտադրական նշ. շին	353	7.4%	379	5.9%	358
4	Հասարակական նշ. շին.	1250	8.7%	1359	0.7%	1350
5	Ավտոտնակ	402	22.4%	492	-12.0%	559
6	Հող	4871	22.1%	5946	6.8%	5565
6ա	Ա/թ գյուղատնտ. նշ. հող	3079	10.5%	3401	0.5%	3383
	Ընդամենը	13540	17.8%	15956	-1.9%	16270

Աղյուսակ 1.1-5-ում ներկայացված է հանրապետությունում 2019 թվականի մայիսին անշարժ գույքի նկատմամբ գրանցված գործարքների քանակական և տոկոսային բաշխվածությունը ըստ գույքի տեսակների.

Աղյուսակ 1.1-5


Գույքի տեսակ		Հանրապե-տություն		Երևան			Մարզերի քաղաքային բնակավայրեր			Գյուղական բնակավայրեր		
		քանակ	%	քանակ	%	տեսա-կարար կշիռը նմանա-տիպ գործարք-ներում	քանակ	%	տեսա-կարար կշիռը նմանա-տիպ գործարք-ներում	քանակ	%	տեսա-կարար կշիռը նմանա-տիպ գործարք-ներում
1	Բնակարան	4407	27.6%	2978	54.8%	67.6%	1344	31.6%	30.5%	85	1.4%	1.9%
2	Անհատական բնակելի տուն	3373	21.1%	823	15.1%	24.4%	883	20.8%	26.2%	1667	26.6%	49.4%
3	Արտադրական նշ. շին	379	2.4%	154	2.8%	40.6%	90	2.1%	23.7%	135	2.2%	35.6%
4	Հասարակական նշ. շին.	1359	8.5%	742	13.6%	54.6%	447	10.5%	32.9%	170	2.7%	12.5%
5	Ավտոտնակ	492	3.1%	336	6.2%	68.3%	141	3.3%	28.7%	15	0.2%	3.0%
6	Հող	5946	37.3%	404	7.4%	6.8%	1350	31.7%	22.7%	4192	66.9%	70.5%
6 ա	Ա/թ գյուղատնտ. նշ. հող	3401	21.3%	59	1.1%	1.7%	448	10.5%	13.2%	2894	46.2%	85.1%
	Ընդամենը /գործարք/	15956	100.0%	5437	100.0%	34.1%	4255	100.0%	26.7%	6264	100.0%	39.3%

1.2 Երևան քաղաքի անշարժ գույքի շուկայում իրականացված ընդհանուր գործարքների վերլուծություն

1.2.1 Երևան քաղաքում 2019 թվականի մայիսին անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի առավել բարձր տոկոսաչափին արձանագրվել է Կենտրոն ՝ 21.4 %, իսկ ցածրը՝ 0.6 %՝ Նուբարաշեն վարչական շրջաններում:

Գծապատկեր 1.2-1-ում ներկայացված է 2019 թվականի մայիսին Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների քանակական բաշխվածությունը ըստ վարչական շրջանների.

Գծապատկեր 1.2-1



Աղյուսակ 1.2-1-ում ներկայացված է 2019 թվականի մայիսին Երևան քաղաքում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2018 թվականի մայիս և 2019 թվականի ապրիլ ամիսների նկատմամբ.


Աղյուսակ 1.2-1

Վարչական շրջան	2018 թվականի մայիս	փոփոխությունը	2019 թվականի մայիս	փոփոխությունը	2019 թվականի ապրիլ
Դավթաշեն	206	8.7%	224	7.2%	209
Էրեբունի	315	22.9%	387	0.8%	384
Աջափնյակ	512	7.4%	550	3.2%	533
Ավան	220	10.0%	242	-8.0%	263
Արաբկիր	634	18.0%	748	-26.7%	1020
Կենտրոն	884	31.9%	1166	6.0%	1100
Մալաթիա-Սեբաստիա	436	35.3%	590	1.0%	584
Քանաքեռ-Զեյթուն	345	-14.5%	295	-26.4%	401
Շենգավիթ	484	31.4%	636	5.8%	601
Նոր Նորք	489	0.4%	491	-6.3%	524
Նորք-Մարաշ	47	61.7%	76	49.0%	51
Նուբարաշեն	22	45.5%	32	-8.6%	35
Երևան	4594	18.4%	5437	-4.7%	5705

1.2.2 Երևան քաղաքում 2019 թվականի մայիսին ընդհանուր գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 35.2 %, գրանցվել է օտարման, իսկ առավել ցածրը՝ 1.0 %՝ օրինականացման գործարքների նկատմամբ:

Գծապատկեր 1.2-2-ում ներկայացված է 2019 թվականի մայիսին Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների քանակական բաշխվածությունը ըստ տեսակների.

Գծապատկեր 1.2-2



Աղյուսակ 1.2-2-ում ներկայացված է 2019 թվականի մայիսին Երևան քաղաքում իրականացված գործարքների քանակական համեմատությունը 2018 թվականի մայիս և 2019 թվականի ապրիլ ամիսների նկատմամբ:


Աղյուսակ 1.2-2

Հ/Հ	Գործարքի տեսակը	2018 թվականի մայիս	փոփոխությունը	2019 թվականի մայիս	փոփոխությունը	2019 թվականի ապրիլ
1	**Օտարում**	1791	6.8%	1913	-8.6%	2093
1ա	Առուվաճառք	1386	3.8%	1438	-10.6%	1608
1բ	Նվիրատվություն	369	17.9%	435	-1.8%	443
1գ	Փոխանակում	2	0.0%	2	0.0%	2
1դ	Օտարման այլ տեսակ	34	11.8%	38	-5.0%	40
2	**Վարձակալություն**	406	64.3%	667	-12.1%	759
3	**Գրավադրում**	1173	29.9%	1524	-0.7%	1535
4	**Ժառանգություն**	495	1.6%	503	-2.5%	516
5	**Օրինականացում**	33	66.7%	55	-17.9%	67
6	**Առաջնային գրանցում**	432	25.5%	542	10.2%	492
7	**Պետգր. /վերագրանցում/**	264	-11.7%	233	-4.1%	243
	Ընդամենը /գործարք/	4594	18.4%	5437	-4.7%	5705

1.2.3 Երևան քաղաքում 2019 թվականի մայիսին ընդհանուր գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 54.8 %, գրանցվել է բնակարանների, իսկ առավել ցածրը՝ 2.8 %՝ արտադրական նշանակության շինությունների նկատմամբ:

Գծապատկեր 1.2-3-ում ներկայացված է 2019 թվականի մայիսին Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների քանակական բաշխվածությունը ըստ գույքի տեսակների.

Գծապատկեր 1.2-3



Աղյուսակ 1.2-3-ում ներկայացված է 2019 թվականի մայիսին Երևան քաղաքում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2018 թվականի մայիս և 2019 թվականի ապրիլ ամիսների նկատմամբ.

Աղյուսակ 1.2-3


Հ/Հ	Գույքի տեսակ	Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակները				
		2018 թվականի մայիս	փոփոխությունը	2019 թվականի մայիս	փոփոխությունը	2019 թվականի ապրիլ
1	Բնակարան	2644	12.6%	2978	-9.4%	3288
2	Անհատական բնակելի տուն	611	34.7%	823	-1.4%	835
3	Արտադրական նշ. շին	135	14.1%	154	12.4%	137
4	Հասարակական նշ. շին.	723	2.6%	742	2.2%	726
5	Ավտոտնակ	283	18.7%	336	-15.2%	396
6	Հող	198	2.0 անգամ	404	25.1%	323
6ա	Ա/թ գյուղատնտ. նշ. հող	20	3.0 անգամ	59	5.4%	56
	Ընդամենը	4594	18.4%	5437	-4.7%	5705

1.3 Մարզերում անշարժ գույքի շուկայում իրականացված ընդհանուր գործարքների վերլուծություն

1.3.1 Մարզերում 2019 թվականի մայիսին ընդհանուր գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 36.1 %, գրանցվել է օտարման, իսկ առավել ցածրը՝ 1.2 %՝ օրինականացման գործարքների նկատմամբ:

Գծապատկեր 1.3-1-ում ներկայացված է 2019 թվականի մայիսին մարզերում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների քանակական բաշխվածությունը ըստ տեսակների.

Գծապատկեր 1.3-1



Աղյուսակ 1.3-1-ում ներկայացված է 2019 թվականի մայիսին մարզերում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2018 թվականի մայիս և 2019 թվականի ապրիլ ամիսների նկատմամբ.


Աղյուսակ 1.3-1

Հ/Հ	Գործարքի տեսակ	2018 թվականի մայիս	փոփոխությունը	2019 թվականի մայիս	փոփոխությունը	2019 թվականի ապրիլ
1	**Օտարում**	3315	14.5%	3795	-3.4%	3927
1ա	Առուվաճառք	2291	16.2%	2662	-1.5%	2702
1բ	Նվիրատվություն	749	15.2%	863	-12.5%	986
1գ	Փոխանակում	9	33.3%	12	33.3%	9
1դ	Օտարման այլ տեսակ	266	-3.0%	258	12.2%	230
2	**Վարձակալություն**	421	1.4%	427	-4.7%	448
3	**Գրավադրում**	1071	32.3%	1417	3.4%	1370
4	**Ժառանգություն**	1676	19.0%	1995	6.5%	1874
5	**Օրինականացում**	98	24.5%	122	5.2%	116
6	**Առաջնային գրանցում**	1674	15.9%	1941	1.8%	1907
7	**Պետգր. /վերագրանցում/**	691	19.0%	822	-10.9%	923
	Ընդամենը /գործարք/	8946	17.6%	10519	-0.4%	10565

1.3.2 Մարզերում 2019 թվականի մայիսին ընդհանուր գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 52.7 %, գրանցվել է հողերի, իսկ առավել ցածրը՝ 1.5 % ավտոտնակների նկատմամբ:

Գծապատկեր 1.3-4-ում ներկայացված է 2019 թվականի մայիսին մարզերում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների քանակական բաշխվածությունը ըստ գույքի տեսակների.

Գծապատկեր 1.3-4



Աղյուսակ 1.3-4-ում ներկայացված է 2019 թվականի մայիսին մարզերում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2018 թվականի մայիս և 2019 թվականի ապրիլ ամիսների նկատմամբ.

Աղյուսակ 1.3-4

Հ/Հ	Գույքի տեսակ	Մարզերում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակները				
		2018 թվականի մայիս	**2018 թվականի մայիս**	**2018 թվականի մայիս**	**2018 թվականի մայիս**	**2018 թվականի մայիս**
1	Բնակարան	1277	11.9%	1429	-11.9%	1622
2	Անհատական բնակելի տուն	2132	19.6%	2550	-5.3%	2693
3	Արտադրական նշ. շին	218	3.2%	225	1.8%	221
4	Հասարակական նշ. շին.	527	17.1%	617	-1.1%	624
5	Ավտոտնակ	119	31.1%	156	-4.3%	163
6	Հող	4673	18.6%	5542	5.7%	5242
6ա	Ա/թ գյուղատնտ. նշ. հող	3059	9.3%	3342	0.5%	3327
	Ընդամենը	8946	17.6%	10519	-0.4%	10565


2 ՕՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

2.1 Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրականացված օտարման գործարքների վերլուծություն

2.1.1 2019 թվականի մայիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 5708 օտարման գործարք, որը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 35.8 %-ը:

2009-2019 թվականների մայիս ամսվա անշարժ գույքի օտարման գործարքների քանակները ներկայացված են Գծապատկեր 2.1-1-ում.


Գծապատկեր 2.1-1




2.1.2 Հանրապետությունում 2019 թվականի մայիսին անշարժ գույքի նկատմամբ գրանցված օտարման գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 33.5 %, գրանցվել է Երևան քաղաքում, իսկ առավել ցածրը՝ 1.2 %՝ Վայոց ձորի մարզում:

Գծապատկեր 2.1-2-ում և Գծապատկեր 2.1-3-ում ներկայացված է 2019 թվականի մայիսին հանրապետությունում իրականացված օտարման գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունը ըստ Երևան քաղաքի և մարզերի.

Գծապատկեր 2.1-2



Գծապատկեր 2.1-3



Աղյուսակ 2.1-1-ում ներկայացված է 2019 թվականի մայիսին հանրապետությունում իրականացված օտարման գործարքների քանակական համեմատությունը 2018 թվականի մայիս և 2019 թվականի ապրիլ ամիսների նկատմամբ.

Աղյուսակ 2.1-1


	2018 թվականի մայիս	փոփոխումը	2019 թվականի մայիս	փոփոխումը	2019 թվականի ապրիլ
Երևան	1791	6.8%	1913	-8.6%	2093
Արագածոտն	349	-10.9%	311	14.3%	272
Արարատ	462	29.9%	600	-13.9%	697
Արմավիր	408	27.9%	522	4.6%	499
Գեղարքունիք	246	7.3%	264	-25.2%	353
Լոռի	472	9.7%	518	9.7%	472
Կոտայք	742	13.6%	843	5.1%	802
Շիրակ	196	27.0%	249	-13.2%	287
Սյունիք	179	24.6%	223	-11.9%	253
Վայոց ձոր	122	-41.8%	71	-22.8%	92
Տավուշ	139	39.6%	194	-3.0%	200
Հանրապետություն	5106	11.8%	5708	-5.2%	6020

2019 թվականի մայիսին հանրապետությունում գրանցված օտարման գործարքների քանակը 2019 թվականի ապրիլի համեմատ նվազել է 5.2 %-ով, 2018 թվականի մայիսի համեմատ՝ աճել 11.8 %-ով, Երևան քաղաքում 2019 թվականի ապրիլի համեմատ նվազել է 8.6 %-ով, 2018 թվականի մայիսի համեմատ՝ աճել 6.8 %-ով, մարզերի քաղաքային բնակավայրերում 2019 թվականի ապրիլի համեմատ աճել է 3.4 %-ով, 2018 թվականի մայիսի համեմատ՝ 20.2 %-ով, իսկ գյուղական բնակավայրերում 2019 թվականի ապրիլի համեմատ նվազել է 7.5 %-ով, 2018 թվականի մայիսի համեմատ՝ աճել 10.9%-ով:


2.1.3 Հանրապետությունում 2019 թվականի մայիսին օտարման գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 40.6 % գրանցվել է հողերի, իսկ առավել ցածրը՝ 1.1 % արտադրական նշանակության շինությունների նկատմամբ:

Գծապատկեր 2.1-4-ում և Գծապատկեր 2.1-5-ում ներկայացված է 2019 թվականի մայիսին հանրապետությունում անշարժ գույքի օտարման գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունը ըստ գույքի տեսակների.

Գծապատկեր 2.1-4



Գծապատկեր 2.1-5




Աղյուսակ 2.1-2-ում ներկայացված է հանրապետությունում 2019 թվականի մայիսին անշարժ գույքի օտարման գործարքների քանակական և տոկոսային բաշխվածությունը ըստ գույքի տեսակի.

Աղյուսակ 2.1-2

Հ/Հ	Գույքի տեսակ	Հանրապետություն		Երևան			Մարզերի քաղաքային բնակավայրեր			Գյուղական բնակավայրեր		
		քանակ	%	քանակ	%	տեսակ արար կշիռը նմանա տիպ գործար քներում	քա-նակ	%	տեսակ արար կշիռը նմանա տիպ գործար քներում	Քա-նակ	%	տեսակ ա-րար կշիռը նմանա տիպ գործար քներում
1	Բնակարան	1831	32.1%	1198	62.6%	65.4%	596	38.8%	32.6%	37	1.6%	2.0%
2	Անհատական բնակելի տուն	1019	17.9%	251	13.1%	24.6%	246	16.0%	24.1%	522	23.1%	51.2%
3	Արտադրական նշ. շին.	60	1.1%	23	1.2%	38.3%	14	0.9%	23.3%	23	1.0%	38.3%
4	Հասարակական նշ. շին.	242	4.2%	123	6.4%	50.8%	91	5.9%	37.6%	28	1.2%	11.6%
5	Ավտոտնակ	241	4.2%	160	8.4%	66.4%	75	4.9%	31.1%	6	0.3%	2.5%
6	Հող	2315	40.6%	158	8.3%	6.8%	514	33.5%	22.2%	1643	72.7%	71.0%
6ա	Ա/թ գյուղ նշ.հող	1287	22.5%	24	1.3%	1.9%	205	13.3%	15.9%	1058	46.8%	82.2%
	Ընդամենը /գործարք/	5708	100.0%	1913	100.0%	33.5%	1536	100.0%	26.9%	2259	100.0%	39.6%

Գծապատկեր 2.1-6-ում և Աղյուսակ 2.1-3-ում ներկայացված է 2019 թվականի մայիսին հանրապետությունում իրականացված օտարման գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունը ըստ գործարքի տեսակների.

Գծապատկեր 2.1-6



Աղյուսակ 2.1-3

Օտարում	Երևան	Արագածոտն	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց ձոր	Տավուշ	Մարզեր	Ընդամենը
Առուվաճառք	1438	214	483	431	111	267	665	157	150	57	127	2662	4100
Նվիրատվություն	435	81	111	84	82	115	161	89	62	14	64	863	1298
Փոխանակում	2	2	1	2	0	0	7	0	0	0	0	12	14
Օտարման այլ տեսակ	38	14	5	5	71	136	10	3	11	0	3	258	296
Ընդամենը	1913	311	600	522	264	518	843	249	223	71	194	3795	5708


3 ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

3.1 Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն

3.1.1 2019 թվականի մայիսին հանրապետությունում գրանցվել է անշարժ գույքի առուվաճառքի 4100 գործարք :

2009-2019 թվականների մայիս ամսվա անշարժ գույքի առուվաճառքի գործարքների քանակները ներկայացված են Գծապատկեր 3.1-1-ում.


Գծապատկեր 3.1-1




3.1.2 Հանրապետությունում 2019 թվականի մայիսին անշարժ գույքի առուվաճառքի գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 35.1 %, գրանցվել է Երևան քաղաքում, իսկ առավել ցածրը՝ 1.4 %՝ Վայոց ձորի մարզում :

Գծապատկեր 3.1-2-ում և Գծապատկեր 3.1-3-ում ներկայացված է 2019 թվականի մայիսին հանրապետությունում իրականացված առուվաճառքի գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունը ըստ Երևան քաղաքի և մարզերի.

Գծապատկեր 3.1-2



Գծապատկեր 3.1-3



Աղյուսակ 3.1-1-ում ներկայացված է 2019 թվականի մայիսին հանրապետությունում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական համեմատությունը 2018 թվականի մայիս և 2019 թվականի ապրիլ ամիսների նկատմամբ.

Աղյուսակ 3.1-1


	2018 թվականի մայիս	փոփոխումը	2019 թվականի մայիս	փոփոխումը	2019 թվականի ապրիլ
Երևան	1386	3.8%	1438	-10.6%	1608
Արագածոտն	227	-5.7%	214	5.4%	203
Արարատ	377	28.1%	483	-7.1%	520
Արմավիր	333	29.4%	431	0.2%	430
Գեղարքունիք	124	-10.5%	111	-15.9%	132
Լոռի	231	15.6%	267	8.1%	247
Կոտայք	555	19.8%	665	7.1%	621
Շիրակ	135	16.3%	157	-22.3%	202
Սյունիք	128	17.2%	150	-13.3%	173
Վայոց ձոր	86	-33.7%	57	-3.4%	59
Տավուշ	95	33.7%	127	10.4%	115
Հանրապետություն	3677	11.5%	4100	-4.9%	4310

2019 թվականի մայիսին հանրապետությունում գրանցված առուվաճառքի գործարքների քանակը 2019 թվականի ապրիլի համեմատ նվազել է 4.9 %-ով, 2018 թվականի մայիսի համեմատ՝ աճել 11.5 %-ով, Երևան քաղաքում 2019 թվականի ապրիլի համեմատ նվազել է 10.6 %-ով, 2018 թվականի մայիսի համեմատ՝ աճել 3.8 %-ով, մարզերի քաղաքային բնակավայրերում 2019 թվականի ապրիլի համեմատ աճել է 0.6 %-ով, 2018 թվականի մայիսի համեմատ՝ 17.8 %-ով, իսկ գյուղական բնակավայրերում 2019 թվականի ապրիլի համեմատ նվազել է 2.8 %-ով, 2018 թվականի մայիսի համեմատ ՝ աճել 15.1 %-ով:


3.1.3 Հանրապետությունում 2019 թվականի մայիսին առուվաճառքի գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 41.1 %, գրանցվել է հողերի, իսկ առավել ցածրը՝ 1.2 %, արտադրական նշանակության շինությունների նկատմամբ:

Գծապատկեր 3.1-4-ում և Գծապատկեր 3.1-5-ում ներկայացված է 2019 թվականի մայիսին հանրապետությունում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների տոկոսային և քանակական բաշխվածություններն ըստ գույքի տեսակների.

Գծապատկեր 3.1-4



Գծապատկեր 3.1-5



Աղյուսակ 3.1-2-ում ներկայացված է 2019 թվականի մայիսին հանրապետությունում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2018 թվականի մայիս և 2019 թվականի ապրիլ ամիսների նկատմամբ.

Աղյուսակ 3.1-2


Հ/Հ	Գույքի տեսակ	Հանրապետությունում առուվաճառքի գործարքների քանակները				
		2018 թվականի մայիս	փոփոխությունը	2019 թվականի մայիս	փոփոխությունը	2019 թվականի ապրիլ
1	Բնակարան	1267	5.1%	1331	-9.6%	1472
2	Անհատական բնակելի տուն	488	25.8%	614	-5.1%	647
3	Արտադրական նշ. շին	61	-21.3%	48	6.7%	45
4	Հասարակական նշ. շին.	203	2.0%	207	-10.4%	231
5	Ավտոտնակ	183	17.5%	215	-22.9%	279
6	Հող	1475	14.2%	1685	3.0%	1636
6ա	Ա/թ գյուղատնտ. նշ. հող	824	3.2%	850	-1.4%	862
	Ընդամենը	3677	11.5%	4100	-4.9%	4310

3.2 Երևան քաղաքում անշարժ գույքի շուկայում իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն

3.2.1 Երևան քաղաքում 2019 թվականի մայիսին անշարժ գույքի առուվաճառքի գործարքների առավել բարձր տոկոսաչափ՝ 20.3 %, արձանագրվել է Կենտրոն, իսկ առավել ցածրը՝ 0.5 %՝ Նուբարաշեն վարչական շրջաններում:

Գծապատկեր 3.2-1-ում ներկայացված է 2019 թվականի մայիսին Երևան քաղաքում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունն ըստ վարչական շրջանների.

Գծապատկեր 3.2-1



Աղյուսակ 3.2-1-ում ներկայացված է 2019 թվականի մայիսին Երևան քաղաքում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական համեմատությունը 2018 թվականի մայիս և 2019 թվականի ապրիլ ամիսների նկատմամբ.


Աղյուսակ 3.2-1

Վարչական շրջան	2018 թվականի մայիս	փոփոխությունը	2019 թվականի մայիս	փոփոխությունը	2019 թվականի ապրիլ
Դավթաշեն	70	-8.6%	64	18.5%	54
Էրեբունի	97	-1.0%	96	6.7%	90
Աջափնյակ	136	13.2%	154	-3.1%	159
Ավան	79	6.3%	84	16.7%	72
Արաբկիր	185	15.7%	214	-36.9%	339
Կենտրոն	276	5.8%	292	-15.4%	345
Մալաթիա-Սեբաստիա	130	16.9%	152	-0.7%	153
Քանաքեռ-Զեյթուն	115	-37.4%	72	-30.1%	103
Շենգավիթ	134	19.4%	160	13.5%	141
Նոր Նորք	148	-8.8%	135	1.5%	133
Նորք-Մարաշ	10	-20.0%	8	-33.3%	12
Նուբարաշեն	6	16.7%	7	0.0%	7
Երևան	1386	3.8%	1438	-10.6%	1608

3.2.2 Երևան քաղաքում 2019 թվականի մայիսին անշարժ գույքի առուվաճառքի գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 61.7 %, գրանցվել է բնակարանների, իսկ առավել ցածրը՝ 1.5 % արտադրական նշանակության շինությունների նկատմամբ:

Գծապատկեր 3.2-2-ում ներկայացված է 2019 թվականի մայիսին Երևան քաղաքում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունն ըստ գույքի տեսակի.

Գծապատկեր 3.2-2



Աղյուսակ 3.2-2-ում ներկայացված է 2019 թվականի մայիսին Երևան քաղաքում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական համեմատությունը 2018 թվականի մայիս և 2019 թվականի ապրիլ ամիսների նկատմամբ.

Աղյուսակ 3.2-2


Հ/Հ	Գույքի տեսակ	Երևան քաղաքում իրականացված առուվաճառքի գործարքների քանակները				
		2018 թվականի մայիս	փոփոխումը	2019 թվականի մայիս	փոփոխումը	2019 թվականի ապրիլ
1	Բնակարան	865	2.5%	887	-9.3%	978
2	Անհատակ անբնակելի տուն	144	15.3%	166	-3.5%	172
3	Արտադրական նշ. շին	18	22.2%	22	69.2%	13
4	Հասարակական նշ. շին.	120	-11.7%	106	-17.8%	129
5	Ավտոտնակ	130	6.2%	138	-33.0%	206
6	Հող	109	9.2%	119	8.2%	110
6ա	Ա/թ գյուղատնտ. նշ. հող	5	2.6 անգամ	13	-18.8%	16
	Ընդամենը	1386	3.8%	1438	-10.6%	1608

3.3 Մարզերում անշարժ գույքի շուկայում իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն

Մարզերում 2019 թվականի մայիսին առուվաճառքի գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 58.8 %, գրանցվել է հողերի, իսկ առավել ցածրը՝ 1.0 % արտադրական նշանակության շինությունների նկատմամբ:

Գծապատկեր 3.3-1-ում ներկայացված է 2019 թվականի մայիսին մարզերում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունը ըստ գույքի տեսակի.

Գծապատկեր3.3-1



Աղյուսակ 3.3-1-ում ներկայացված է 2019 թվականի մայիսին մարզերում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական համեմատությունը 2018 թվականի մայիս և 2019 թվականի ապրիլ ամիսների նկատմամբ.

Աղյուսակ 3.3-1

Հ/Հ	Գույքի տեսակ	Մարզերում իրականացված առուվաճառքի գործարքների քանակները				
		2018 թվականի մայիս	փոփոխությունը	2019 թվականի մայիս	փոփոխությունը	2019 թվականի ապրիլ
1	Բնակարան	402	10.4%	444	-10.1%	494
2	Անհատական անբնակելի տուն	344	30.2%	448	-5.7%	475
3	Արտադրական նշ. շին	43	-39.5%	26	-18.8%	32
4	Հասարակական նշ. շին.	83	21.7%	101	-1.0%	102
5	Ավտոտնակ	53	45.3%	77	5.5%	73
6	Հող	1366	14.6%	1566	2.6%	1526
6ա	Ա/թ գյուղատնտ. նշ. հող	819	2.2%	837	-1.1%	846
	Ընդամենը	2291	16.2%	2662	-1.5%	2702


3.4 Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրավաբանական անձանց կողմից իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն

2019 թվականի մայիսին անշարժ գույքի 328 առուվաճառքի գործարքների կողմ հանդիսացել են իրավաբանական անձինք, որը կազմել է առուվաճառքի ընդհանուր գործարքների 8.0 %-ը :

Վերոնշյալ առուվաճառքի գործարքներից 115-ի դեպքում իրավաբանական անձինք հանդիսացել են միայն գնորդ, 204-ի դեպքում՝ միայն վաճառող, իսկ 9 առուվաճառքի գործարքի դեպքում գործարքի երկու կողմն էլ հանդիսացել են իրավաբանական անձինք:

Գծապատկեր 3.4-1-ում ներկայացված են իրավաբանական անձանց կողմից 2019 թվականի մայիսին իրականացված առուվաճառքի գործարքների քանակական և տոկոսային բաշխվածությունները.


Գծապատկեր 3.4-1




Արդյունքում 2019 թվականի մայիսին իրավաբանական անձինք գնել են 124 միավոր անշարժ գույք և վաճառել են 213 միավոր անշարժ գույք:

Գծապատկեր 3.4-2-ում ներկայացված է իրավաբանական անձանց կողմից 2019 թվականի մայիսին գնված անշարժ գույքերի քանակական և տոկոսային բաշխվածությունը ըստ գույքի տեսակների, իսկ Գծապատկեր 3.4-3-ում՝ իրավաբանական անձանց կողմից վաճառված անշարժ գույքերի քանակական և տոկոսային բաշխվածությունը ըստ գույքի տեսակների.

Գծապատկեր 3.4-2



Գծապատկեր 3.4-3



Աղյուսակ 3.4-1-ում ներկայացված է 2019 թվականի մայիսին իրավաբանական անձանց կողմից գնված և վաճառված անշարժ գույքերի համամասնությունը հանրապետությունում գրանցված առուվաճառքների գործարքներում ըստ Երևանի և մարզերի.

Աղյուսակ 3.4-1

	Առուվաճառքի գործարքների քանակ	Իրավաբանական անձանց կողմից գնված անշարժ գույք			Իրավաբանական անձանց կողմից վաճառված անշարժ գույք		
		քանակ	%	տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում
Երևան	1438	25	20.2%	1.7%	170	79.8%	11.8%
Արագածոտն	214	14	11.3%	6.5%	2	0.9%	0.9%
Արարատ	483	20	16.1%	4.1%	7	3.3%	1.4%
Արմավիր	431	7	5.6%	1.6%	6	2.8%	1.4%
Գեղարքունիք	111	2	1.6%	1.8%	3	1.4%	2.7%
Լոռի	267	8	6.5%	3.0%	4	1.9%	1.5%
Կոտայք	665	35	28.2%	5.3%	4	1.9%	0.6%
Շիրակ	157	4	3.2%	2.5%	4	1.9%	2.5%
Սյունիք	150	1	0.8%	0.7%	4	1.9%	2.7%
Վայոց Ձոր	57	6	4.8%	10.5%	2	0.9%	3.5%
Տավուշ	127	2	1.6%	1.6%	7	3.3%	5.5%
Հանրապետություն	4100	124	100.0%	3.0%	213	100.0%	5.2%

Աղյուսակ 3.4-2-ում ներկայացված է 2019 թվականի մայիսին իրավաբանական անձանց կողմից գնված և վաճառված անշարժ գույքերի քանակական համեմատությունը 2019 թվականի ապրիլի նկատմամբ.

Աղյուսակ 3.4-2

	Իրավաբանական անձանց կողմից գնված անշարժ գույք			Իրավաբանական անձանց կողմից վաճառված անշարժ գույք		
	2019 թվականի մայիս	փոփոխումը	2019 թվականի ապրիլ	2019 թվականի մայիս	փոփոխումը	2019 թվականի ապրիլ
Երևան	25	-63.2%	68	170	-50.3%	342
Արագածոտն	14	-50.0%	28	2	-90.0%	20
Արարատ	20	6.7 անգամ	3	7	2.3 անգամ	3
Արմավիր	7	16.7%	6	6	20.0%	5
Գեղարքունիք	2	-50.0%	4	3	-57.1%	7
Լոռի	8	33.3%	6	4	-55.6%	9
Կոտայք	35	6.1%	33	4	-66.7%	12
Շիրակ	4	-33.3%	6	4	4-ով ավել	0
Սյունիք	1	-75.0%	4	4	4.0 անգամ	1
Վայոց Ձոր	6	3.0 անգամ	2	2	2-ով ավել	0
Տավուշ	2	-50.0%	4	7	2.3 անգամ	2
Հանրապետություն	**124**	**-24.4%**	**164**	**213**	**-46.9%**	**401**

Աղյուսակ 3.4-3-ում ներկայացված է 2019 թվականի մայիսին իրավաբանական անձանց կողմից գնված և վաճառված անշարժ գույքերի համամասնությունը հանրապետությունում գրանցված առուվաճառքների գործարքներում ըստ գույքի տեսակների.

Աղյուսակ 3.4-3

	Գույքի տեսակ	Առուվաճառքի գործարք-ների քանակ	Իրավաբանական անձանց կողմից գնված անշարժ գույք			Իրավաբանական անձանց կողմից վաճառված անշարժ գույք		
			քանակ	%	տեսակարար կշիռը նմանատիպ գործարք-ներում	քանակ	%	տեսակարար կշիռը նմանատիպ գործարք-ներում
1	Բնակարան	1331	9	7.3%	0.7%	100	46.9%	7.5%
2	Անհատական բնակելի տուն	614	22	17.7%	3.6%	11	5.2%	1.8%
3	Արտադրական նշ. շին	48	5	4.0%	10.4%	6	2.8%	12.5%
4	Հասարակական նշ. շին.	207	4	3.2%	1.9%	11	5.2%	5.3%
5	Ավտոտնակ	215	2	1.6%	0.9%	63	29.6%	29.3%
6	Հող	1685	82	66.1%	4.9%	22	10.3%	1.3%
6ա	Ա/թ գյուղատնտ. նշ. հող	850	52	41.9%	6.1%	7	3.3%	0.8%
Ընդամենը		4100	124	100.0%	3.0%	213	100.0%	5.2%

Աղյուսակ 3.4-4-ում ներկայացված է 2019 թվականի մայիսին իրավաբանական անձանց կողմից գնված և վաճառված անշարժ գույքերի համամասնությունը հանրապետությունում գրանցված առուվաճառքների գործարքներում ըստ գույքի տեսակների.

Աղյուսակ 3.4-4

		Իրավաբանական անձանց կողմից գնված անշարժ գույք			Իրավաբանական անձանց կողմից վաճառված անշարժ գույք		
		2019 թվականի մայիս	փոփոխությունը	2018 թվականի սեպտեմբեր	2019 թվականի մայիս	փոփոխությունը	2018 թվականի սեպտեմբեր
1	Բնակարան	9	-25.0%	12	100	-43.5%	177
2	Անհատական բնակելի տուն	22	22.2%	18	11	-15.4%	13
3	Արտադրական նշ. շին.	5	-50.0%	10	6	-45.5%	11
4	Հասարակական նշ. շին.	4	-33.3%	6	11	-67.6%	34
5	Ավտոտնակ	2	-95.0%	40	63	-53.0%	134
6	Հող	82	5.1%	78	22	-31.3%	32
6ա	Ա/թ գյուղատնտ. նշ. հող	52	-16.1%	62	7	-68.2%	22
	Ընդամենը	124	-24.4%	164	213	-46.9%	401


3.5 Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում օտարերկրյա քաղաքացիների կողմից իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն

2019 թվականի մայիսին անշարժ գույքի 489 առուվաճառքի գործարքների կողմ են հանդիսացել օտարերկրյա քաղաքացիները, որը կազմել է առուվաճառքի ընդհանուր գործարքների 11.9 %-ը:

Առուվաճառքի գործարքներից 148-ի դեպքում օտարերկրյա քաղաքացիները հանդիսացել են միայն գնորդ, 324-ի դեպքում՝ միայն վաճառող, իսկ 17 առուվաճառքի գործարքի դեպքում երկու կողմն էլ հանդիսացել են օտարերկրյա քաղաքացիներ:


Գծապատկեր 3.5-1-ում ներկայացված է օտարերկրյա քաղաքացիների կողմից 2019 թվականի մայիսին իրականացված առուվաճառքի գործարքների քանակական և տոկոսային բաշխվածությունը.

Գծապատկեր 3.5-1




Գծապատկեր 3.5-2-ում ներկայացված է օտարերկրյա քաղաքացիների կողմից 2019 թվականի մայիսին գնված անշարժ գույքերի քանակական և տոկոսային բաշխվածությունը ըստ գույքի տեսակների, իսկ Գծապատկեր 3.5-3-ում՝ օտարերկրյա քաղաքացիների կողմից վաճառված անշարժ գույքերի քանակական և տոկոսային բաշխվածությունը ըստ գույքի տեսակների.

Գծապատկեր 3.5-2



Գծապատկեր 3.5-3



Աղյուսակ 3.5-1-ում ներկայացված է 2019 թվականի մայիսին օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված և վաճառված անշարժ գույքերի համամասնությունը առուվաճառքների գործարքներում ըստ Երևան քաղաքի և մարզերի.

Աղյուսակ 3.5-1

	Առուվաճառքի գործարքների քանակ	Օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված անշարժ գույք			Օտարերկրյա քաղաքացիների կողմից վաճառված անշարժ գույք		
		քանակ	%	տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում
Երևան	1438	96	58.2%	6.7%	94	27.6%	6.5%
Արագածոտն	214	7	4.2%	3.3%	12	3.5%	5.6%
Արարատ	483	10	6.1%	2.1%	45	13.2%	9.3%
Արմավիր	431	9	5.5%	2.1%	38	11.1%	8.8%
Գեղարքունիք	111	6	3.6%	5.4%	9	2.6%	8.1%
Լոռի	267	5	3.0%	1.9%	19	5.6%	7.1%
Կոտայք	665	22	13.3%	3.3%	58	17.0%	8.7%
Շիրակ	157	6	3.6%	3.8%	20	5.9%	12.7%
Սյունիք	150	1	0.6%	0.7%	23	6.7%	15.3%
Վայոց ձոր	57	0	0.0%	0.0%	4	1.2%	7.0%
Տավուշ	127	3	1.8%	2.4%	19	5.6%	15.0%
Հանրապետություն	4100	**165**	100.0%	4.0%	**341**	100.0%	8.3%

Աղյուսակ 3.5-2-ում ներկայացված է 2019 թվականի մայիսին օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված և վաճառված անշարժ գույքերի քանակական համեմատությունը 2019 թվականի ապրիլի նկատմամբ.

Աղյուսակ 3.5-2

	Օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված անշարժ գույք					Օտարերկրյա քաղաքացիների կողմից վաճառված անշարժ գույք				
	2018 թվականի մայիս	փոփոխումը	2019 թվականի մայիս	փոփոխումը	2019 թվականի ապրիլ	2019 թվականի մայիս	փոփոխումը	2019 թվականի մայիս	փոփոխումը	2019 թվականի ապրիլ
Երևան	75	28.0%	96	-22.0%	123	91	3.3%	94	8.0%	87
Արագածոտն	6	16.7%	7	2.3 անգամ	3	5	2.4 անգամ	12	-36.8%	19
Արարատ	1	10.0 անգամ	10	-23.1%	13	35	28.6%	45	-15.1%	53
Արմավիր	5	80.0%	9	12.5%	8	19	2.0 անգամ	38	2.7%	37
Գեղարքունիք	2	3.0 անգամ	6	3.0 անգամ	2	8	12.5%	9	-52.6%	19
Լոռի	7	-28.6%	5	-50.0%	10	17	11.8%	19	-51.3%	39
Կոտայք	9	2.4 անգամ	22	4.8%	21	37	56.8%	58	81.3%	32
Շիրակ	5	20.0%	6	-33.3%	9	7	2.9 անգամ	20	42.9%	14
Սյունիք	3	-66.7%	1	-83.3%	6	11	2.1 անգամ	23	43.8%	16
Վայոց Ձոր	0	0.0%	0	0.0%	0	5	-20.0%	4	4.0 անգամ	1
Տավուշ	0	3-ով ավել	3	3-ով ավել	0	5	3.8 անգամ	19	26.7%	15
Հանրապետություն	**113**	46.0%	**165**	-15.4%	**195**	**240**	42.1%	**341**	2.7%	**332**

Աղյուսակ 3.5-3-ում ներկայացված է 2019 թվականի մայիսին օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված և վաճառված անշարժ գույքերի համամասնությունը հանրապետությունում գրանցված առուվաճառքների գործարքներում ըստ գույքի տեսակների.

Աղյուսակ 3.5-3

		Առուվաճառքի գործարքների քանակ	Օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված անշարժ գույք			Օտարերկրյա քաղաքացիների կողմից վաճառված անշարժ գույք		
			քանակ	%	տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում
1	Բնակարան	1331	60	36.4%	4.5%	139	40.8%	10.4%
2	Անհատական բնակելի տուն	614	31	18.8%	5.0%	79	23.2%	12.9%
3	Արտադրական նշ. շին	48	2	1.2%	4.2%	1	0.3%	2.1%
4	Հասարակական նշ. շին.	207	13	7.9%	6.3%	4	1.2%	1.9%
5	Ավտոտնակ	215	20	12.1%	9.3%	7	2.1%	3.3%
6	Հող	1685	39	23.6%	2.3%	111	32.6%	6.6%
6ա	Ա/թ գյուղատնտ. նշ. հող	850	2	1.2%	0.2%	57	16.7%	6.7%
	Ընդամենը	4100	165	100.0%	4.0%	341	100.0%	8.3%

Աղյուսակ 3.5-4-ում ներկայացված է 2019 թվականի մայիսին օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված և վաճառված անշարժ գույքերի համամասնությունը հանրապետությունում գրանցված առուվաճառքների գործարքներում ըստ գույքի տեսակների.

Աղյուսակ 3.5-4

		Օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված անշարժ գույք					Օտարերկրյա քաղաքացիների կողմից վաճառված անշարժ գույք				
		2018 թվականի մայիս	փոփոխումը	2019 թվականի մայիս	փոփոխումը	2019 թվականի ապրիլ	2018 թվականի մայիս	փոփոխումը	2019 թվականի մայիս	փոփոխումը	2019 թվականի ապրիլ
1	Բնակարան	69	-13.0%	60	-40.0%	100	126	10.3%	139	-1.4%	141
2	Անհատական բնակելի տուն	18	72.2%	31	-8.8%	34	42	88.1%	79	6.8%	74
3	Արտադրական նշ. շին.	1	2.0 անգամ	2	0.0%	2	7	-85.7%	1	0.0%	1
4	Հասարակական նշ. շին.	7	85.7%	13	18.2%	11	3	33.3%	4	0.0%	4
5	Ավտոտնակ	9	2.2 անգամ	20	-16.7%	24	5	40.0%	7	16.7%	6
6	Հող	9	2.0 անգամ	39	62.5%	24	57	94.7%	111	4.7%	106
6ա	Ա/թ գյուղատնտ. նշ. հող	3	-33.3%	2	2-ով ավել	0	43	32.6%	57	-12.3%	65
	Ընդամենը	113	46.0%	165	-15.4%	195	240	42.1%	341	2.7%	332

Աղյուսակ 3.5-5-ում ներկայացված է 2019 թվականի մայիսին օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված, իսկ Աղյուսակ 3.5-6-ում՝ օտարերկրյա քաղաքացիների կողմից վաճառված անշարժ գույքերի համամասնությունները ըստ պետությունների և տարածաշրջանների:

Աղյուսակ 3.5-5

h/h	Պետության անվանումը	Բնակարան	Բնակելի տուն	Արտադ. նշ. շին.	Հասար. նշ. շին.	Ավտոտնակ	Հող	տ/պ գյուղ.նշ	Ընդամենը
1	Ռուսաստանի Դաշնություն	34	17	1	7	15	12	2	86
2	ԱՄՆ	18	4	0	4	5	7	0	38
3	Իրան	1	0	0	1	0	1	0	3
4	Սիրիա	0	0	0	0	0	0	0	0
5	Եվրոպական պետություններ	4	2	0	0	0	6	0	12
6	ԱՊՀ պետություններ, բացառությամբ ՌԴ	0	1	1	1	0	2	0	5
7	Այլ պետություններ	3	7	0	0	0	11	0	21
	ԸՆԴԱՄԵՆԸ	60	31	2	13	20	39	2	165

Աղյուսակ 3.5-6

h/h	Պետության անվանումը	Բնակարան	Բնակելի տուն	Արտադ. նշ. շին.	Հասար. նշ. շին.	Ավտոտնակ	Հող	տ/պ գյուղ. նշ	Ընդամենը
1	Ռուսաստանի Դաշնություն	113	70	0	2	3	90	47	278
2	ԱՄՆ	9	2	0	1	2	0	0	14
3	Իրան	4	4	0	0	1	2	0	11
4	Սիրիա	0	0	0	0	0	0	0	0
5	Եվրոպական պետություններ	6	0	1	0	1	8	5	16
6	ԱՊՀ պետություններ, բացառությամբ ՌԴ	6	3	0	1	0	10	5	20
7	Այլ պետություններ	1	0	0	0	0	1	0	2
	ԸՆԴԱՄԵՆԸ	139	79	1	4	7	111	57	341

Աղյուսակ 3.5-7-ում ներկայացված է 2019 թվականի մայիսին օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված և վաճառված անշարժ գույքերի համամասնությունը հանրապետությունում գրանցված առուվաճառքների գործարքներում ըստ պետությունների և տարածաշրջանների.

Աղյուսակ 3.5-7


Պետության անվանումը	Օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված անշարժ գույք					Օտարերկրյա քաղաքացիների կողմից վաճառված անշարժ գույք				
	2018 թվականի մայիս	փոփոխումը	2019 թվականի մայիս	փոփոխումը	2019 թվականի ապրիլ	2018 թվականի մայիս	փոփոխումը	2019 թվականի մայիս	փոփոխումը	2019 թվականի ապրիլ
Ռուսաստանի Դաշնություն	65	32.3%	86	-38.1%	139	207	34.3%	278	3.0%	270
ԱՄՆ	7	5.4 անգամ	38	3.8 անգամ	10	9	55.6%	14	-17.6%	17
Իրան	7	-57.1%	3	-50.0%	6	2	5.5 անգամ	11	37.5%	8
Սիրիա	4	4-ով ապակաս	0	0.0%	0	0	0.0%	0	0.0%	0
Եվրոպական պետություններ	11	9.1%	12	-42.9%	21	7	2.3 անգամ	16	-11.1%	18
ԱՊՀ պետություններ, բացառությամբ ՌԴ	5	0.0%	5	-64.3%	14	12	66.7%	20	53.8%	13
Այլ պետություններ	14	50.0%	21	4.2 անգամ	5	3	-33.3%	2	-66.7%	6
ԸՆԴԱՄԵՆԸ	113	46.0%	165	-15.4%	195	240	42.1%	341	2.7%	332

3.6 Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների վերլուծություն

3.6.1 Հանրապետությունում 2019 թվականի մայիսին իրականացվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի 1331 գործարք: 2019 թվականի մայիսին հանրապետությունում գրանցված բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը 2019 թվականի ապրիլի համեմատ նվազել է 9.6 %-ով, 2018 թվականի մայիսի համեմատ՝ աճել 5.1 %-ով:

Գծապատկեր 3.6-1-ում ներկայացված է 2019 թվականի մայիսին հանրապետությունում իրականացված բնակարանների առուվաճառքի գործարքների տոկոսային բաշխվածությունը ըստ Երևան քաղաքի և մարզերի.

Գծապատկեր 3.6-1



Աղյուսակ 3.6-1-ում ներկայացված է 2019 թվականի մայիսին հանրապետությունում իրականացված բնակարանների առուվաճառքի գործարքների քանակական համեմատությունը 2018 թվականի մայիս և 2019 թվականի ապրիլ ամիսների նկատմամբ.

Աղյուսակ 3.6-1


	2018 թվականի մայիս	փոփոխումը	2019 թվականի մայիս	փոփոխումը	2019 թվականի ապրիլ
Երևան	865	2.5%	887	-9.3%	978
Արագածոտն	13	-15.4%	11	-45.0%	20
Արարատ	45	2.2%	46	7.0%	43
Արմավիր	37	54.1%	57	7.5%	53
Գեղարքունիք	17	-5.9%	16	23.1%	13
Լոռի	73	5.5%	77	-1.3%	78
Կոտայք	106	1.9%	108	-10.0%	120
Շիրակ	43	44.2%	62	-16.2%	74
Սյունիք	41	22.0%	50	-23.1%	65
Վայոց ձոր	14	-50.0%	7	-12.5%	8
Տավուշ	13	-23.1%	10	-50.0%	20
Հանրապետություն	1267	5.1%	1331	-9.6%	1472

3.6.2 Երևան քաղաքում 2019 թվականի մայիսին իրականացվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի 887 գործարք, 2019 թվականի մայիսին Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը 2019 թվականի ապրիլի համեմատ նվազել է 9.3 %-ով, իսկ 2018 թվականի մայիսի համեմատ՝ աճել 2.5 %-ով:

Երևան քաղաքում 2019 թվականի մայիսին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակի առավել բարձր տոկոսաչափ՝ 21.9 %, արձանագրվել է Կենտրոն, իսկ առավել ցածրը՝ 0.2 %՝ Նորք-Մարաշ վարչական շրջաններում:

Գծապատկեր 3.6-2-ում ներկայացված է 2019 թվականի մայիսին Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունը ըստ վարչական շրջանների.

Գծապատկեր 3.6-2



